ԿՈՍՏ

891.715
Ն-38

Ս. ՄԱՐՇԱԿ

ՓՈՍՏ



Թարգմ. Ս Տարոնցի

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
1934
ԵՐԵՎԱՆ

891.791
Մ-38

ԿԱՅՐԵԼԵՐԸ Մ. ՑԵՌԱՆՈՎԱԿՈՒ

26 JUN 2013
Ս 38
4189

ՓՈՍՏ

Բորիս Ժիտկով

1

Կապույտ զգեստը հագին,
5 թվանիշը կրծքին,
Ուսից կախած պայուսակ,
Դուռն ով է թակում արագ։
Դա նա՛ յե, նա՛,
Արկադին՝
Փոստատարը Լենինգրադի։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՌ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

30 MAY 2011

Պայուսակում իր կաշվե՝
Նամակներ կան անհաշիվ,
Վորոնք յեկել են հեռվից,—
Տագանրոգից,
Տամբովից,
Ցերեվանից,
Թիֆլիսից։

Գործն սկսեց ժամը յոթին,
Հինգ պայուսակ դատարկեց։
Մինչև ժամը տասներկուսին՝
Հասցեներով բաժանեց։



1004/30313

2

—Պատվիրված այս նամակը
Տվեք ընկեր Ժիտկովին։

—Ժիտկով, ներեցեք ընկեր,
Մեզ մոտ չկա այդպիսին։
—Իսկ ուր է նա, չգիտեք։
—Բեռլին թռավ նա յերեկ։

Ժիտկովն արտասահման է —
Ոդանավով զիլ թռչում.
Կանաչ դաշտեր տեսնելով։
Իսկ փոստատար վագոնը
Նրա նամակն է տանում,
Սուրում նրա հետքերով։

Այնտեղ կան շատ ծրարներ,
Վորոնք դրված են շարք-շարք՝
Այս և կամ այն դարակում.
Այնտեղ՝ յերկու փոստատար
Որորվում են անընդհատ
Փոստը տանող վագոնում։

Բացիկ՝ Դուբրովկային,
Ծանրոց՝ Պակրովկային,
Թերթ Կլին կայարանին,
Նամակ Բոլոգոյին։
Իսկ պատվիրվածը՝
Գնում է դեպի Բեռլին։

Ահա, նաև Բեռլինյան
Փոստատարը բեռնված։
Կրծքի կոճակներն ասես՝
Վառվռում են լույսի պես.
Յեվ հարթ չալվար նա ունի,
Ըստ գիտության կանոնի։

Շուրջն ավտոներ են հոսում,
Շիններով առաջ վազում.
Չեն ափսոսում շիններին
Ու լորենի ծառերին։

Փոստատարը ներս մտնում,
Տան ծառային է գտնում.
—Նամակը հերը Ժիտկովին.
Համար վեցից ինձ տվին։
—Ժամը տասին յերեկվա,
Գնաց Ժիտկովն Անգլիա։

Վոչ մի նամակ
Ինքն իրեն
Յեվ վոչ մի տեղ չի գնա.
Գցիր նրան փոստարկղ,
Իսկ նա այնտեղ չի մնա.
Նա կփախչի,
Կթռչի,
Հազար վերստեր կգնա։

Յեվ դժվար չե նամակին
Աշխարհը տեսնել։—
Նա
Չի գնում տոմսակով.
Այլ գնում ե հեռուները —
Փոստանիշով հասարակ.
Նա մարդատար գնացքով
Հասնում ե շատ աշխարհներ։



Ճանապարհին
Նամակը
Չի ուզում ջուր և ուտեստ.
Միայն ասում ե նա խիստ,

Շտապ։ Անգլիա։ Լոնդոն։ Վեստ։ 14, Բոբկին — Ստրիտ։

Բեռնավորված սլանում են
Շարք-շարք կազմած ավտոներ,
Տանիքներին ծածանվում են՝
Պլակատներ, աֆիշներ։
Կոնդուկտորը ճչում ե խիստ,—
—Վե՛րջ յերթուղուն։— Բոբկին —
Ստրիտ

Դեպի Բոբկին-Ստրիտն արագ
Մատը Սմիտն ե քայլում.
Գլխին դրած կապույտ գլխարկ,
Զոր ցախի յե նմանվում։
Տասչորսերորդ շենքի դռան
Նա մուրճիկով կախվի
Զարկում, ապա և խստաձայն՝
—Նամակ մատը Ժիտկովին։

Տան ծառան եկ, աչքի տակով
Տված նամակին նայեց.
Յետ ասաց, վոր Բորիս Ժիտկովն
Բրազիլիա ուղեվորվեց։



Շուտով կգնա նավը՝
Յերկու բոպեյից հետո.
Վողջ կայուտները նավի
Լցված է ժողովրդով։
Կայուտներից

Մեկն ահա
Չի առնում վոչ մի ճամբրուկ.
Այնտեղ միայն առանձին
Տեղավորվում է փոստը՝
Փոստատարով միասին։

Բրազիլիայի արմատների
Տակից, հոգնած քայլերով.
Ուժ է տալիս իր վոտքերին,
Փոստատար Դոն Բազիլիոն։

Ձեռքին ամուր բռնել է նա
Մի հին նամակ տրորված,
Վորի վրա ոտարերկրյա
Փոստանիշ է կպցրված։

Մակագրված այդ նամակի
Հասցեն էլ ճիշտ է գրած,
Բրազիլիայից, ահա, կրկին
Ուղարկվում է Լենինգրադ։

Ա9-582

Կապույտ զգեստը հագին,
5 թվանիշը կրծքին,
Ուսից կախած պայուսակ
Դուռն ով է թակում արագ։
Դա նա՛ յե, նա՛ —
Արկադին՝
Փոստատարը Լենինգրադի։

Նա ձգվում է, վոր նորից
Նամակը տա Ժիտկովին։
Հա՛, Ժիտկովին։
—Ե՛յ, Բորիս,
Ստորագրիր և տացիր։

Հարեվանը ցատկեց տեղից՝
—Ա՜յ, քեզ հրաշք իսկական.
Նայեք, նամակն իմ յեռակից
Ման է յեկել և ինչքա՜ն։—
Կարել է նա լայն ծովերը,
Իմ հետքով, իմ յեռակից,

Գնացքները ու նավերը
Հասցրել են բերել ինձ.
Նա թե ծովում, թե ցամաքում
Հիշել է ինձ իր մտքում։
Փառք ու պատիվ վողջ փոստատարը
Հոգնածներին արևառ,
Ագնվասիրտ ու անվրդովուն
Փոստատարին — հազար փառք։

ՀԽՍՀ — ՍՍՌ
Գ. Ա. Մասիսյանի անվան

С. МАРШАК

ПОЧТА

ПЕР. С. ТАРОНЦИ

ГИЗ, СССР ПРИВЛЮ

ՀՀ Ազգային գրադարան
NL0395194

4189